ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ –
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
«Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի» (ՏՏԵԶԾ)
Վարկի համարը՝ P150327
Առաջադրանքի անվանում՝ «Դեպի Տաթև վանական համալիր տանող ճանապարհի վթարված սողանքային հատվածի վերակառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ LTS-15
31 օգոստոսի, 2022թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կառավարություն») վարկ է ստացել Համաշխարհային Բանկից «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի» ֆինանսավորման նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների իրականացման համար:

Առաջադրանքի նպատակը. Ակնկալվում է, որ Ծրագրի գործունեության արդյունքում կշահեն մասնավորապես Հայաստանի Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Կոտայք և Լոռի մարզերի տեղաբնակները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Ակնկալվում է, որ վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների քանակը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման կարողությունների բարելավման առումով:

ՏՏԵԶ Ծրագրի միջոցների մի մասը կօգտագործվի **ենթածրագրերի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման համար:**

Խորհրդատուն պետք է՝
Խորհրդատուն պետք է իրականացնի տեխնիկական հսկողություն **«Դեպի Տաթև վանական համալիր տանող ճանապարհի վթարված սողանքային հատվածի վերակառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների** համար:

Խորհրդատուի հետ կկնքվի ժամանակի վրա հիմնված պայմանագիր: Պայմանագրի ստորագրման նախատեսվող ժամկետն է **հոկտեմբեր, 2022թ.:**

Ծառայությունները կմատուցվեն շինարարական ծրագրի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև շինարարական աշխատանքների ավարտը՝ նախատեսվում է 150 օր:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (Պատվիրատու) նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներ) ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկատվություն (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, կազմակերպության փորձառությունը հավաստող նախկինում կատարած աշխատանքների ցանկը, և պայմանագիր շնորհելու դեպքում նաև համապատասխան բնագավառի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության լիցենզիա և լիցենզիային կից ներդիրներ՝ **Ճանապարհաշինարարական, հիդրոտեխնիկական** ոլորտներում, որը ցույց կտա, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշներն են.

Վերջին 5 տարիների ընթացքում

1. *Կազմակերպության ընդհանուր փորձառությունը՝ Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման պատշաճ ավարտված պայմանագրեր՝ յուրաքանչյուրն առնվազն 2 մլն ՀՀ դրամ պայմանագրային արժեքով):*
2. *Կազմակերպության հատուկ փորձառությունը՝ Ճանապարհների կառուցման/վերակառուցման տեխնիկական հսկողության իրականացման պատշաճ ավարտված պայմանագրեր՝յուրաքանչյուրն առնվազն 1 մլն ՀՀ դրամ պայմանագրային արժեքով):*
3. *Երկրորդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային գների հանրագումար:*

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ “Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ”, 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:
Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:
Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի “Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ” 3.7 կետում սահմանված “Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն” ընթացակարգին համաձայն:
Շահագրգիռ խորհրդատուները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժ. 09:00-ից մինչև ժ.18:00-ը:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան **2021թ. սեպտեմբերի 14-ը, ժամը 17:00-ը:**

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Գնումների բաժին
Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 407 սենյակ
Էլ-փոստ՝ procurement@atdf.am
Հեռ: (+37460) 50 15 60